ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.06.2019թ.

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԱՑ-LO-2019/58

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լևոն Օհանյանս, ելնելով «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ հարուցված ընթացակարգի քննությունը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրելու անհրաժեշտությունից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ հարուցված ընթացակարգի քննության ժամկետը երկարաձգել 10 օրացուցային օրով և ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշման հրապարակման վերջնաժամկետ սահմանել 28.06.2019թ. ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված

բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**